

«Տնտեսություն եւ արժեքներ» հետազոտական կենտրոն

Երևան, հոկտեմբեր 31, 2007թ.

Մամլո հաղորդագրություն

Մրցունակության համաշխարհային զեկույցի համաձայն Հայաստանն իր մրցունակությամբ 93-րդն է աշխարհի 131 երկրների մեջ

«Տնտեսություն եւ արժեքներ» հետազոտական կենտրոնը, որպես Համաշխարհային տնտեսական ֆորումի (ՀՏՖ)՝ Համաշխարհային մրցունակության ցանցի գործընկեր, համառոտ կերպով ներկայացնում է «2007-2008 թ.թ. Մրցունակության համաշխարհային զեկույցում» (ՄՀԶ) հրապարակված տվյալները:

ՄՀԶ-ն աշխարհում լայնորեն ճանաչված եւ մեծ հեղինակություն վայելող ամենամյա հանդես է, որտեղ համեմատվում, գնահատվում եւ վերլուծվում են աշխարհի տարբեր երկրների տնտեսական մրցունակությունը եւ դրանց տնտեսական զարգացման վրա ներազդող գործոնները: Առաջին անգամ 1979թ.-ին հրապարակված այդ զեկույցն այսօր արդեն ներկայացնում է աշխարհի 131 երկրների տնտեսությունների մրցունակության վերլուծությունը: Հայաստանն արդեն երրորդ տարին անընդմեջ ընդգրկվում է ՄՀԶ-ում:

ՄՀԶ-ն իր վերլուծություններն ամփոփում եւ համեմատվող երկրներին դասակարգում է երկու հիմնական ցուցիչների միջոցով. Համաշխարհային մրցունակության ցուցիչ (ՀԱՄ ցուցիչ) և Գործարար մրցունակության ցուցիչ (ԳԱՄ ցուցիչ): ՀԱՄ ցուցիչը, որը զեկույցի գլխավոր ցուցիչն է, 110 գործոնների կամ ենթացուցիչների վրա հիմնվող համապարփակ ցուցիչ է: 110 ցուցիչներն իրենց հերթին խմբավորվում են ըստ մրցունակության 12 հեմասյունների (տես աղյուսակը): Դրանով ամփոփվում են լայն ընդգրկում ունեցող այնպիսի գործոնների վերլուծությունը, ինչպիսիք են երկրների մակրոտնտեսական կատարողականը, հաստատութենական (ինստիտուցիոնալ) զարգացածությունը, առողջապահությունն ու կրթությունը, գործարարության կատարելագործվածությունն ու նորարարության աստիճանը, և այլն: ԳԱՄ ցուցիչը կենտրոնանում է առավելապես երկրների միկրոտնտեսական կատարողականի վրա, ներառելով գործարար միջավայրերին ու գործարարության կատարելագործվածության մակարդակներին վերաբերող գործոններ:

ՄՀԶ-ի վերլուծությունն ու համեմատությունները հիմնվում են. (ա) երկրների պաշտոնական վիճակագրական, ինչպես նաեւ միջազգային կառույցների հրապարակած տվյալների վրա, եւ (բ) քննարկվող երկրներում տնտեսության տարբեր ծյուղերը ներկայացնող առևտրային կազմակերպությունների ղեկավարների շրջանում անցկացված հարցումների արդյունքում ստացված տվյալների վրա:

2007-2008 թ.թ. ՄՀԶ-ի արդյունքները

Այս տարվա ՄՀԶ-ն ընդգրկում է ավելի մեծ թվով երկրներ՝ համեմատած նախորդ տարվա հետ-131 երկրներ՝ նախորդ տարվա 125-ի փոխարեն: ՄՀԶ-ի մեջ ներառվել են վեց նոր երկրներ, (Լիբիա, Սիրիա, Սաուդյան Արաբիա, Օման, Ուզբեկստան, Պուերտո Ռիկո), իսկ Սերբիան ու Մոնտենեգրոն այս տարի ներկայացվել են միմյանցից առանձին: Այս տարվա ՄՀԶ-ն ներկայանում է ավելի կատարելագործված մեթոդաբանությամբ. կատարված փոփոխությունները նպատակ ունեն պատշաճորեն հաշվի առնելու համաշխարհային փորձն ու տնտեսագիտական մտքի զարգացումները:

Համաձայն ՄՀԶ-ի ՀԱՄ ցուցիչի դասակարգման՝ աշխարհի ամենամրցունակ երկրների առաջին եռյակը ներկայացնում են ԱՄՆ-ն, Շվեյցարիան և Դանիան: Իսկ ամենամրցունակ երկրների առաջին տասնյակը լրացնում են Շվեդիան, Գերմանիան, Ֆինլանդիան, Սինգապուրը, ճապոնիան, Մեծ Բրիտանիան և Նիդեռլանդները:

Ըստ ՀԱՍ ցուցիչի դասակարգման, Հայաստանն իր մրցունակությամբ զբաղեցրել է 93-րդ տեղը աշխարհի 131 երկրների մեջ, նախորդ տարվա 82-րդ տեղի փոխարեն (125 երկրների մեջ): ԱՊՀ երկրների հետ համեմատության մեջ, ըստ ՀԱՍ ցուցիչի դասակարգման Հայաստանն ավելի բարձր դիրք ունի, քան Մոլդովան, Տաջիկստանը եւ Ղրղզստանը, սակայն զիջում է մյուս երկրներին:

ԱՊՀ երկրների հետ համեմատության մեջ, ըստ ՀԱՍ ցուցիչի դասակարգման Հայաստանն ավելի բարձր դիրք ունի, քան Մոլդովան, Տաջիկստանը եւ Ղրղզստանը, սակայն զիջում է մյուս երկրներին:

Ինչպես եւ նախորդ տարիներին Հայաստանը շարունակում է համեմատաբար բարվոք դիրքեր ունենալ մակրոտնտեսական կայունության առումով (57-րդ տեղ), եւ դրանում հատկապես կարեւոր դրական դեր ունեն գնաճի ցածր մակարդակն ու պետական պարտքի ոչ մեծ լինելը՝ համեմատած ՀՆԱ-ի հետ:

Այս տարի Հայաստանը համեմատաբար բարձր տեղ է զբաղեցրել նաեւ աշխատուժի շուկայի արդյունավետության առումով (40-րդ տեղ), ընդ որում՝ դիրքի վրա դրականորեն ազդող կարևոր գործոններից մեկը գործատու-աշխատող հարաբերությունների ազատականությունը կամ ձկունությունն է: Սակայն, աշխատուժի շուկայում Հայաստանի դիրքերը բավականին ցածր են եղած մտավոր կարողությունների ու տաղանդի արդյունավետ օգտագործման և, հատկապես, մասնագիտական կառավարման վրա հենվելու առումով:

2007-2008 թ.թ. ՄՀԶ-ում Հայաստանի արդյունքներն ըստ ՀԱՍ դիրքը ձեւավորող 12 հեմասյունների ներկայացված են աղյուսակում:

Հայաստանի արդյունքներն ըստ ՀԱՍ դիրքը ձեւավորող 12 հեմասյունների

	ՀԱՍ ցուցիչը ձեւավորող 12 հեմասյունները	Հայաստանի դիրքը 131 երկրների մեջ
1	Հաստատություններ (ինստիտուտներ)	96
2	Ենթակառույցներ	87
3	Մակրոտնտեսական կայունություն	57
4	Առողջապահություն եւ տարրական կրթություն	99
5	Միջն.եւ բարձր. կրթություն եւ վերապատրաստում	95
6	Ապրանքների շուկայի արդյունավետություն	104
7	Աշխատուժի շուկայի արդյունավետություն	40
8	Ֆինանսական շուկայի կատարելագործվածություն	110
9	Տեխնոլոգիական պատրաստվածություն	104
10	Շուկայի չափ	111
11	Գործարարության կատարելագործվածություն	115
12	Նորարարություն	94

Այնուամենայնիվ, ի տարբերություն մակրոտնտեսական բարվոք դիրքի, Հայաստանն իր միկրոտնտեսական կատարողականով, գործարար միջավայրի բարենպաստությամբ ու գործարարության կատարելագործվածության աստիճանով զիջել է երկրների մեծ մասին եւ ըստ ԳԱՍ ցուցիչի դասակարգման զբաղեցրել է 108-րդ տեղը աշխարհի 127 երկրների մեջ, նախորդ տարվա 91-րդ տեղի փոխարեն:

ԱՊՀ երկրների հետ համեմատության մեջ, ըստ ԳԱՍ ցուցիչի դասակարգման Հայաստանը գտնվում է նախավերջին դիրքում, եւ Հայաստանի դիրքը բարձր է միայն Ղրղզստանի դիրքից:

Ինչպես նախորդ տարվա, այնպես էլ այս տարվա ցուցանիշներից կատարվելիք հիմնական հետևությունն այն է, որ Հայաստանի մրցունակության ուժեղացման տեսակետից, զարգացման ներկա փուլում, երբ առկա է մակրոտնտեսական համեմատաբար բարվոք միջավայր, ավելի ու ավելի կենսական նշանակություն են ստանում երկրի գործարար միջավայրի բարելավումն ու գործարարության կատարելագործումը: ՄՅԶ-ի արդյունքները թույլ են տալիս եզրակացնել, որ միկրոտնտեսական ոլորտում Հայաստանի մրցունակության բարձրացման և կայուն զարգացման համար ինչպես պետական այնպես էլ մասնավոր հատվածի առջև կանգնած հատկապես կարելու խնդիրներ են, մասնավորապես. (ա) գործարար ռազմավարությունների ու գործառույթների ցածր մակարդակն ու պարզունակությունը, (բ) մասնավոր հաստատությունների թերզարգացածությունը, (գ) գործարար միջավայրում առկա մի շարք խնդիրներ, ինչպիսիք են ֆինանսական թույլ շուկան, տեղական շուկայի փոքրությունը եւ այդ փոքր շուկայում «անբարեխիղճ» մրցակության առկայությունը, վարչարարական բարդությունները, որոնք կապված են օրենքների ոչ արդյունավետ կիրարկման, դատական համակարգի անբավարար անկախության ու հովանավորչության հետ, (դ) բարձրագույն կրթական եւ մասնագետների վերապատրաստման անբավարար համակարգերը, (ե) թույլ համագործակցությունը գործարարների եւ գործարարության օժանդակող կառույցների միջեւ, եւ (զ) արտաքին շուկաների փոքր չափը, (է) նորարարության ցածր մակարդակը:

ՄՅԶ-ում Հայաստանին վերաբերող ավելի մանրամասն նյութեր գտնելված են «Տնտեսություն եւ արժեքներ» հետազոտական կենտրոնի ինտերնետ կայքում <http://www.ev.am/global.htm> :

Հայաստանի մրցունակության զեկույց

«Տնտեսություն եւ արժեքներ» հետազոտական կենտրոնը նախաձեռնել է Հայաստանի Ազգային մրցունակության զեկույցի պատրաստումը, որն առաջին անգամ համապարփակ կներկայացնի Հայաստանի տնտեսության մրցունակությունը, կբացահայտի այդ ոլորտի հիմնական մարտահրավերները, կհատկորոշի դրանց միջնաժամկետ եւ երկարաժամկետ ազդեցությունը երկրի զարգացման վրա, ինչպես նաեւ կլուսաբանի այն կարելու լծակները, որոնց կիրառմամբ կարելի է բարձրացնել Հայաստանի միջազգային մրցակցային դիրքը: Զեկույցը նախատեսվում է հրատարակել 2007թ. դեկտեմբերին:

«Տնտեսություն և արժեքներ»-ը մրցունակությունն ուսումնասիրող մտավոր կենտրոն է, որը ձգտում է ներմուծել զարգացման նոր հայեցակարգեր բարձրակարգ միջազգային կապերի, լավագույն որակավորում ունեցող վերլուծաբանների և խորհրդատուների ցանցի միջոցով:

«Տնտեսություն եւ արժեքներ» հետազոտական կենտրոնը, որպես Համաշխարհային տնտեսական ֆորումի (ՀՏՖ) Համաշխարհային մրցունակության ցանցի գործընկեր մասնակցում է վերջինիս կողմից պատրաստվող զեկույցներին:

Հասցե՝
Հովսեփ Էմին 123
Երևան, 0051
Հեռ. 0 10 21 97 40
Էլ.-փոստ. info@ev.am
www.ev.am